Ղարաբաղյան շարժումը և հայրենական կերպարվեստը

Լ. Բ. Ղալայան, Ս. Լ. Ղալայանց

Հոդվածում լուսաբանվում է հայ կերպարվեստի արցախյան հատվածի վիճակը խորհրդային տարիներին և նշվում ազգային գաղթոնքի դերը արցախյան մշակույթում:

Ազգի պատմական անցյալի վկայությունները նրա ստեղծած մշակութային արժեքներն են, որոնցով էլ հենց ազգը ներկայանում է համաշխարհային քաղաքակրթությանը: Հայկական մշակույթը բացառություն չի կազմել և նրա ստեղծագործական բարձրարժեք կոթողներն իրենց հայաշունչ վկայությամբ փաստում են մեր բազմադարյան ազգային լինելիությունը:

Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցվելով անհնարին դարձավ այս տարածքում ազգային մշակութային արժեքների ստեղծումն ու զարգացումը: Հենց միայն այն. որ Ղարաբաղում բնակվում ու ստեղծագործում էին տասնյակ գունանկարիչներ, քանդակագործներ, թատերական նկարիչներ ու արվեստագետներ, սակայն ինքնավար մարզը չուներ նույնիսկ իբրև հասարակական կառույց նկարիչների միություն, այդ վկայություն է Ադրբեջանի հայահալած այն քաղաքականության, որով ձգտում էին սպանել այն ամեն ազգային, ինչով մենք կարող էինք աշխարհին հայ երևալ: Երկրամասում անհնար էր հայկական ազգային ճարտարապետական որևէ կառույցի կամ արվեստի բարձրարժեք գործի ստեղծումը:

Տարածաշրջանի հանրահայտ գործիչների հուշարձաններն անգամ պատվիրվում էին Բաքվում, իրականացվում ադրբեջանցի արվեստագետների կողմից, այդ միանգամից լուծելով երկու հիմնարար խնդիր:

- Լեռնային Ղարաբաղը զրկվում էր ազգային կոլորիտից

- Վճարը ստանում էր ադրբեջանցին, բարելավելով իր սոցիալական վիճակը:

Միակ աշխատանքը, որը մինչ 1988 թ. կանգնեց դա Ս. Բաղդասարյանի »Մենք ենք մեր սարերը« նրկֆիգուր քանդակն է, որն էլ ժամանակին նրկրամասում ստեղծել էր քաղաքական շիկակացած մթնոլորտ:

Արցախյան շարժումը մեր ժողովրդին բերեց ոչ միայն քաղաքական ու էթնիկական պայքարի հաղթանակ, այլև նոր շունչ պարգևեց մեր ստեղծագործ ժողովրդի տաղանդավոր գավակներին:

Չնայած օտարաշունչ »արվեստի« թմբիրից արթնանալը մինչ այսօր էլ դժվար է այն սերնդի համար, ովքեր միանգամից կրում էին թե ԽՍՀՄ տոտալիտար տերության քմահաճույքները և թե առավել ևս Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը, այնուամենայնիվ նույնիսկ ռմբակոծությունների ու արկակոծությունների, գրտի, գրկանքի ու քաղցի պայմաններում շատերը զենքը ձեռին, շարունակեցին ստեղծագործել և այդ տարիներին է, որ ծնվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Զինանշանը, բազմաթիվ կտավներ, որոնցում արտացոլված են մեր Գոյապայքարի հերոսական մարտիկներն ու նրանց պայքարի առանձին դրվագները: Այդ ընթացքում բացվեցին ցուցահանդեսներ, մեր նկարիչները դուրս եկան երկաթե վարագույրի հետևից և ներկայացան ոչ միայն աշխարհին , այլև մայր Հայաստանին, որը ևս զրկված էր հաղորդակից լինելու իր մյուս հատվածի մշակութային արժեքներին:

Այսօր մենք ունենք ԼՂՀ նկարիչների միություն, երեք տասնյակից ավելի արհեստավարժ նկարիչներով, որոնք մեծ եռանդով ու պատրաստակամությամբ ստեղծագործում են և ծառայում իրենց երկրին:

Կազմակերպվել են սիմպոզիումներ, որոնց ընթացքում կերտված աշխատանքները տեղադրված են մեր երկրամասի ու մայրաքաղաքի տարբեր բնակավայրերում:

Կանգնեցվում են հուշակոթողներ երկրաշարժի, սումգայիթյան ու արցախյան գոյապայքարի զոհերի հիշատակին: Կազմակերպվում են ցուցահանդես վաճառքներ և մեր նկարիչների այսօր աշխատանքներ ունեն աշխարհի տարբեր երկրներում:

Այսօր մեր նկարիչները պատրաստ են իրենց բազմաժանր աշխատանքներով ցուցադրվել ոչ միայն հայրենիքում, այլև արտերկրում:

Ղարաբաղյան արվեստն այսօր հայաշունչ է, ազգային ու ծառայում է մեր ժողովրդի գնոազիտական ճաշակի բարձրացմանը:

Карабахское движение и отечественное искусство

Лаврент Галаян, Сасун Галаянц

Резюме

В статье освещается роль карабахского движения в возраждении национальной самобытности арцахского искусства, ставшего чужеродным за годы советского тоталитарного режима и азербайджанского национализма.